ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» ապրիլի 2022թ. ՆՄՈ/312-2022

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի ապրիլի 18-ի ՆԳՍ/16.1/9471-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2022 թվականի ապրիլի 30-ին կազմակերպվող համապետական շաբաթօրյակի ընթացքում աղբահանության և սանիտարական մաքրման, տարածքների բարեկարգման աշխատանքները համակարգելու և վերահսկելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ պատասխանատուներով՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Հովհաննիսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկությունները պարբերաբար ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանին, իսկ վերջնական արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշմամբ նախատեսված կազմակերպչական աշխատանքների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություններին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Ա. Ավետիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

VERIFIED OCSP 4/28/2022 17:45:05 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505